



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





14705

14706

14707

14708

14709

1907

347.7

U-66









# Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ՈՉ-ԻՍԼԱՄ ՏԱՐՐԵՐՈՒ

ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ



(Վաւերացեալ 20 Րէճէսլ 327 և 23 Յուլիս 323)



ԹԱՐԳՄԱՆԵՑ ԲԱՅԱՏՐՈՒԹԵԱՄԲ

Կ. Ս Օ Լ Ա Խ Ե Ա Ն

Վ. Վ. Փաստարան

*Handwritten signatures and notes in Armenian script, including a large signature and the word 'հարգաւոր' (venerable).*

*Handwritten note: Վ. Վ. Ք 71*

Կ. Պ Ո Լ Ի Ս

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

1910








355.21(56)

# Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

## ՈՉ-ԻՍԼԱՄ ՏԱՐՐԵՐՈՒ

### ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ



(Վաւերացեալ 20 Րէճէպ 327 և 23 Յուլիս 323)



ԹԱՐԳՄԱՆԵՑ ԲԱՅԱՏՐՈՒԹԵԱՄԲ

Կ. Ս Օ Լ Ա Խ Ե Ա Ն

Վ.Կ.Յ. Փաստարան



Կ. Պ Ո Լ Ի Ս

1910

0135  
14



7261

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՍԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

(ՀՀ-ի միջին դպրատան համար 1922 թվականի օգոստոսի 1-ին հրատարակված)

ՏՄԱՐԱՆ ԷՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

№ 38

6172  
41



# Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

## ՈԶ-ԻՍԼԱՄ ՏԱՐՐԵՐՈՒ

### ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՅՕԴ . Ա .— Ոչ-իսլամ տարրերէն մինչև ցայսօր առնուած գլխաւոր (պէտէլի ասքէրի) (տաճ .) ՅՁԾ թուականէն սկսեալ ջնջուած է :

Հետեւաբար ոչ-իսլամներէ ի կ . Պոլիս և իր արուարձաններու մէջ բնակողներէն և թէ անուն-նին արձանագրուած (նիւֆիւսլէրի թահրիր օլու-նան) տեղերու մէջ գտնուած ժողովուրդներէն ա-նոնք , որոնք գինուորական տարիքին հասած են , անոնք ՅՁԾ թուականէն սկսեալ իսլամաց յատուկ հին գինուորագրութեան օրինաց ենթակայ ըլ-լալով , անոր արամագրութեան համեմատ վիճակ (գուրայ) պիտի քաշեն :

ՅՕԴ . Բ .— Ոչ-իսլամ տարրերու քննութիւնները (մուայէնէլէրի) կատարելու և անոնց վիճակահանու-թիւնը (գուրաւարընը) քաշելու համար տեղական ժողով մը պիտի կազմուի , որուն պիտի անդամակ-ցին նաև տեղւոյն կղերականներ որոնք եթէ պաշ-տօնի գլուխ կը գտնուին այն ատեն :



Զինուորագրութենէ զերծ են, այսինքն յետա-  
ճգեալ դասակարգին կը վերաբերին (էֆրատը մուէ-  
ճէլէնէ թէրք օլունանլար)

ա. Վերոյիշեալ տարրերու պատկանող հրաժարեալ  
պատրիարքներ և կաթողիկոսներ, խախտամապետներ,  
մետրապոլիտներ, եպիսկոպոսներ, վարդապետներ,  
արհիմանտրիթներ, գլխաւոր խախտմներ, վանահայր-  
ներ և կրօնական պաշտօնի մէջ գտնուող քահանաներ,  
տիաքօսներ, խախտմներ, վանքարնակ վարդապետ-  
ներ և քահանաներ:

բ. Մենաստաններու, դպրեւանքներու և խա-  
խամի դպրոցներու աշակերտներ:

գ. Կրթական նախարարութենէն վաւերացած  
բարձրագոյն դպրոցներու աշակերտներ:

դ. Կառավարութիւնէն վաւերացեալ միայն մէկ  
դասատուով կառավարուող գիւղական նախ. դըպ-  
րոցի մը դասատուն, և վիճակներու (գասապա) մէջ  
գործուած կանոնաւոր նախնական դպրոցի մը Ա. և  
Բ. դասատուներ:

Այս օրէնքին գործադրութիւնը Պատերազմական,  
Ներքին և Ելեւմտական նախարարութեանց կը պատ-  
կանի:

Ի 20 Բէճէպ 327 և 25 Յուլիս 325





Ա. գորաքանակի հրամանատարութեան  
կողմէ Կ. Պոլսոյ եւ իր արուարձաններու  
մէջ կատարուելիք զինուորագրութեանց  
անթիւ

Տ Ր Ո Ւ Ա Մ    Հ Ր Ա    Հ Ա Ն Ք Ն Ե Ր

1. — Ներքին Գործոց նախարարութենէն բանա-  
կին զրկուած 304 տարիի ծնածներուն տեսրակը հիմ  
բռնելով՝ պէտք է դիմել նաև թաղային արձանա-  
գրութեանց (գույուտաթը մահալիէ) և անձնագիր-  
ներու (թէգքէրէի Օսմանիէ) տոմարին, որոնց մէջ  
նշանակուած 99 թուականի ծնածներէն մինչև 304  
թուականի ծնածները զինուորացու պէտք է նկատել  
և ըստ այնմ արձանագրել զանոնք իրենց յատուկ  
տոմարին մէջ :

2. — 304 թուականի ծնածները ներկայ տարւոյս  
դասակարգերէն պէտք է համարել և ըստ այնմ կատա-  
րել անոնց նախնական քննութիւնները : Անկէ յետոյ  
նեցուկ (մուին) ունեցող ու չունեցողներ իրարմէ  
զատելով դասակարգութեան թիւ (թէրթիպ նիւմէ-  
րօսը) քաշել տալու է :

3. — Նախնական քննութիւններէ ետք՝ նեցուկ  
ունեցողներուն (մույինլի) և չունեցողներուն (մուին-  
սիզլէր) անուն և թիւ պարունակող ցուցակ մը  
պատրաստելու է և անոր ներքեւ ներկայ եղող  
պաշտօնէից վաւերացնել տալով յանձնելու է իր  
պատկանած պաշտօնատան :



4. — Կայս . հրովարտակը հրատարակուած պարագային՝ իւրաքանչիւր շրջանակի պաշտօնեան (մանդրդէ մէմուրի) պարտաւոր է իր հետ առնել նաև իրեն ընկեր նշանակուած միւս պաշտօնեաները և երթալ իր շրջանակի մէջ գտնուած թաղապետական ժողովներուն (տէվայիրի պէլէտիցէ) մէջ ժողով գումարել և հոն թուագրելու ձեռնարկել ըստ տրամադրութեան հին գինուորագրութեան օրինաց և արդի ոչ-խալամներու գինուորագրութեան օրինաց :

5. — Նախնական քննութիւն կատարուած պարագային՝ գինուորացու տմուրի երխտասարդի մը (միւճէրրէտ) նեցուկ որոնելու համար պէտք է դիմել գինուորական օրինաց (ախդը սաքէր նիզամնամէսի) 40րդ յօդուածի տրամադրութեան գոր օրինակ .

Ս.մուրի գինուորացուի մը իր հայր և կամ եղբայր նեցուկ կրնայ տրուիլ , պայմանաւ որ՝ հայրը կօթանասուն տարիքէն պակաս և կամ եղբայրն ալ տասնեւհինգ տարիքէն վեր ըլլան . և թէ միանգամայն անհրաժեշտ է որ , հայրը առողջ ըլլայ և գործելու կարող . իսկ եթէ ասոնց մէջէն առարկողներ գտնուին թէ , հիւանդ և կամ տկար են իրենք՝ (ալիլ վէ նաթիււան իսէլէր) այդ պարագային վերջէն քննութիւն կատարուելու պայմանաւ , առայժմ արձանագրութեան տեսրակին մէջ բացատրութիւն կը տրուի այդ մասին (քիւնեւտէ շէրճ վէրիլուր) ու յետոյ գինուորացուներ Ս . բաժնի (գըսմը էվէլ) մէջ փոխադրելով թիւ քաշել կը տրուի անոնց (նօմէրօ քէշիտէ իախլուր) :

6. — Ս.յն տմուրի գինուորացուներ որոնք թէ-



պէտեւ հայր և կամ եղբայր մը չունին, սակայն քիչ թէ շատ կալուածատուք մը (վերկի) կը վճարեն և կամ տուներնին չէն է (մասամուր խէ) արտօնեալ զինուորներու բաժնին մէջ կը փոխադրուին (էֆրատար մէզունէ մէյանընա նագլ խտիլուր) : Ինչպէս նաև այդ ամուրի զինուորացուն եթէ ունի իր քով օգնութեան և տպրուստի կարօտ (խաշէ վէ իյանէէ միւհթաճ) եղբորորդի, հօրաքրոջ որդի, մօրաքրոջ որդի հօրեղբորորդիի աստիճան որբերը ու որբունիները, որոնք իր քով կը գտնուին, դարձեալ արտօնեալներու կարգին (էֆրատար մէզունիէ) կը փոխադրուին, (այսինքն առ այժմ զինուոր չեն առնուիր) : (\*)

Եւ եթէ կալուած և կամ արտ չունի այդ զինուորացուն (էմլագ վէ արաղիսի եօղիսէ) կամ թէ ապրուստի կարօտ մէկն չունի իրեն վրայ, անոնք կը համարուին թափառականներ (խանէի պէրտիւշ) և կը նկատուին իբրև նեցուկ ունեցողներ և կ'ենթարկուին վիճակ քաշելու պարտականութեան : Հայր չունեցող ամուրի զինուորացուներուն ունեցած կալուած ու արտերը իրենց եղբոր, հօրեղբոր, հօրեղբորորդիի պէս հեռաւոր և մերձաւոր ազգականներու ունեցած կալուածներուն, գետիններուն նեցուկ կրնայ տրուիլ :

7. — Կալուածատէր և արտերու տէր եղող ամուրի երկու զինուորացու եղբայրներէն երբ երկուքին ալ վիճակ պատահի, այսինքն զինուոր ըլ-

(\*) Ծնթ. — Արտօնեալ (մէզուն) ըսելով պէտք է հասկնալ որ, այն անձը որուն անկարողութեան պատճառաւ իրեն նեցուկ ձգուած էր իր զաւակը, այդ անձը երբ առողջանայ և կամ ուրիշ նեցուկ մը ունենայ և կամ մեռնի, սոյն զինուորացուն դարձեալ զինուրկն. ծառայութեան կը կոչուի :



լան, այն պարագային երկու քէն մին զինուոր առնելու և միւսն ձգելու մասին իրենց հաւանութեան կը դիմուի: Եթէ իրենք չը համաձայնին, այն ատեն առաջին անգամ թիւ ելնողն զինուոր կ'առնուի, իսկ միւսն արտօնեալներուն կարգին կը ձգուի, (այսինքն զինուոր չառնուիր առ այժմ) և տեղի ունեցած գործողութիւնը կ'արձանագրուի տեւորակին մէջ:

8. — Տարիքը եօթանասունէն պակաս եղող մէկուն և կամ այրի կնոջ մը երբ երկու զինուորացու զաւակներ գտնուին, այն ատեն Ս. և Բ. կարգերու կը բաժնուին (գրմար էվվէլ վէ գըսմը սանիէ թէֆրիգ իտիլուր) ասոնցմէ մին երբ զէնքի տակ է արդէն, միւս եղբայրը չառնուիր այլևս, և արտօնեալ կը համարուի: Եւ երբ զինուոր եղող եղբայրը իր (րէտիֆ թէզքէրէսին) ձգելով դեռ շարունակէ իր զինուորական ծառայութիւնը, այն ատեն միւս եղբայրն ալ զինուոր կ'առնուի, ու այս մասին պէտք եղած գործողութիւնը զինուորագրութեան 41րդ յօդուածին համեմատ կը կատարուի:

9. — Այրի կին մը երբ միայն մէկ հատիկ զինուորացու զաւակ մը ունենայ, ու անկէ ի զատ ուրիշ տասնուհինգ տարիքը լրացուցած զաւակ մը կամ թու մը կամ եղբորորդի մը կամ քրոջորդի մը և կամ իր տան մէջ փեսայ մը չունենայ, այն ատեն այդ զաւակը անոր նեցուկ համարուելով զինուոր չառնուիր այլևս, ու արտօնեալներու կարգին դասուելով ըստ այնմ կ'արձանագրուի՝ «տեւորակին» մէջ ըստ տրամագրութեան զինուորագրութեան 41րդ յօդուածին:

10. — Մարդու մը և կամ այրի կնոջ մը երբ



զէնքի տակ գտնուած քանի մը զաւակներէն երկուք և կամ անկէ աւելի մեռնողներ գտնուին ու այդ կիներ անոնցմէ ի զատ տասնեւհինգ տարիքը լրացուցած ուրիշ չափահաս զաւակ մը չունենայ, այն պարագային զէնքի տակ գտնուած զաւակը իրեն կը վերադարձուի իրրեւ նեցուկ, ու կարծանագրուի արտօնեալներու բաժնին մէջ ըստ տրամադրութեան զինուորագրութեան 43րդ յօդուածին:

11.— Ամուսնացեալ զինուորացուի մը նեցուկ կը համարուին տղուն հայր, աներ, աներձագ. պայմանաւ որ հօր և աներոջ տարիքները եօթանասունէն պակաս և աներձագին տարիքը քսանըհինգէն վեր ըլլան: Եւ եթէ հօր և աներոջ տարիքը եօթանասունէն պակաս ըլլալով հանդերձ՝ անձնական տրկարութիւն մը ունենան, բժշկական քննութեան մը կ'ենթարկուին. բայց ասով հանդերձ զինուորական պէտք եղած գործողութիւնները կը շարունակուին մինչեւ տեղեկագրին գալը:

Խորթ աներ՝ նեցուկ չկրնար համարուիլ. իսկ եթէ այդ խորթ աներ՝ տան մէջ կը բնակի փեսային հետ միասին՝ կրնայ նեցուկ համարուիլ:

Ամուսնացեալ զինուորացու մը եթէ իրեն ամուսնալուծեալ կնոջմէն և կամ մեռած կինէն որբերը ունենայ, բայց պայմանաւ որ այդ որբերը իր քով գտնուին, ու ենթադրենք որ այդ զինուորացուն կրկին ամուսնանալով ունենայ խորթ աներ մը ու աներձագ և կամ իր մօր կրկին ամուսնանալուն պատճառաւ ունենայ խորթ հայր մը, ասոնք նեցուկ չեն կրնար համարուիլ այդ որբերուն, իրենց խորթութեան պատճառաւ, որով զինուորացու երիտա-



սարդը կ'արձանագրուի արտօնեալներու բաժնին մէջ : (Առայժմ զինուոր չեն տունուիր) :

Այն աներձագեր որոնք ի վիճակի են փոխարէն (պէտէլի նագաթի) վճարելու, ինչպէս նաեւ քսան և հինգ տարիքէն պակաս և բացառիկ տեղերու (միւս-թէսնա մահալլարի էհալիսինտէն) ժողովուրդներէն եղողներ նեցուկ կրնան ըլլալ :

12. — Ամուսնացեալ երիտասարդի մը ենթադրենք որ գտնուի աներ և աներձագ ալ, բայց երբ այն երիտասարդ ունի իր քով անչափահաս եղբայր, եղբորորդիի, քոյր և քրոջորդիի, հօրաքրոջ որդի և մօրաքրոջ որդիի աստիճան որբերը որոնց ապրուստը իրեն կը պատկանին ըստ շէրիի օրինաց. այն երիտասարդը զինուոր չառնուիր առ այժմ ու կը փոխադրուի արտօնեալներու կարգին մէջ ըստ տրամադրութեան զինուորագրութեան 44րդ յօդուածին :

13. — Մարդու մը և կամ այրի կնոջ մը երկու զաւակ եղած պարագային, որոնցմէ մէկը երբ ոստիկան — զինուորի դպրոցի աշակերտող մըն է կամ թէ անկէ ուսումը լրացնելով այն կարգի ծառայութեանց մէջ կը գտնուի, միւս զաւակը զինուոր չառնուիր առ այժմ ու կը փոխադրուի արտօնեալներու կարգին մէջ :

14. — Ամուրի և կամ թէ ամուսնացեալ երիտասարդի մը և թէ նոյն իսկ գտնուին աներ և աներձագ ալ, բայց այդ երիտասարդը իր բնակած վիճակին մէջ (գաղատա) ունենայ մեծ մայր և մեծ հայր մը, անոնց նեցուկ կը համարուի ու զինուոր չառնուիր և կը փոխադրուի արտօնեալներու կարգին մէջ :



15. — Երկու քէն աւելի զաւակներու աէր եղող ճօր մը և կամ այրի մօր մը ամբողջ զաւակներն ալ առաջին բաժնին վրայ համարուելով (գըամը էվէլէ ալքնարագ) վիճակ քաշելու է. անոնցմէ մէկին եթէ առաջին վիճակ (թէրթիպը էվէլ) հանդիպի, միայն աւնիկայ, իսկ եթէ երկուքին ալ նոյն բանը վիճակի, երկուքն ալ զինուոր առնուելով մնացեալները երկրորդ վիճակին (թէրթիպը սանիէ) կը փոխադրուին ըստ տրամադրութեան զինուորագրութեան օրինաց 47րդ յօդուածին: (միւսներ զինուորէն անուանուիր այլևս):

16. — Մարդու մը և կամ այրի կնոջ մը զինուորացու երկու զաւակ եղած պարագային, երբ անոնց երկուքին ալ վիճակ իյնայ, այն ատեն ծնողաց հաւանութեան կը դիմուի: Անոնցմէ որն որ ներկայացուցնէ անիկայ զինուոր կ'առնուի. իսկ միւսն նեցուկ կը ձգուի:

Իսկ եթէ անոնցմէ մին՝ առաջին վիճակէն իսկ երկրորդը երկրորդ վիճակէն թիւ (թէրթիպ էվէլ տիյէրի թէրթիպ սանի նումէրօ քէշիտէ իյլէտիյի հալտէ) քաշէ. թէպէտև առաջին թիւ քաշողն զինուոր առնել հարկ է, բայց թիւեր կրնայ փոխանակուիլ ծնողաց հաւանութեամբ, այսինքն եզրայրներէն մին միւսին տեղ կրնայ ընդունուիլ:

17. — Մարդ մը զինուորացու զաւակ մը և զինուորացու փեսայ մը ունեցած պարագային, եթէ ասոնք տարբեր տարբեր տուներու մէջ, և ինքն ալ առանձին կը բնակին, ինքն ալ միասին հաշուելով երեք տուն կը համարուին, որով այդ անձը երեք տան նեցուկ չկրնար նկատուիլ, ոստի այդ անձը իբրև ընկերակից նեցուկ (մուին միւշթէրէք) քուէի կը



դրուի . և վիճակահանութեան մէջ առաջին քուէն որուն որ վիճակի, անիկայ նեցուկաւորը համարուելով զինուոր կ'առնուի, իսկ միւսը կը ձգուի :

Իսկ եթէ այդ նեցուկ համարուած անձը իր զաւակին և կամ փեսային քով գտնուի, այն պարագային երկուքն ալ զինուոր կ'առնուին :

18 . — Բարձրագոյն վարժարաններու մէջ ուսանող զինուորացուներ (մէքեաթիպը ապիւէտէ թահսիլտէ պուլունանլար) պէտք է քննել ինչպէս նաև անոնցմէ որոնք որ վկայական առնելով մտած են կառավարութեան պաշտօններու մէջ, անոնց համար ալ ամէն տարի պէտք է քննութիւններ կատարել և անցունել զանոնք արտօնեալներու կարգին մէջ (այսինքն անոնք զերծ կը մնան զինուորական ծառայութենէ ցորչափ պաշտօնի գլուխ գըտնըուին) :

Բարձրագոյն դպրոց կը համարուին միւլքիէի վարժարան, իրաւագիտական (հուգուգ), տար իւլ ֆիւնիւն, (մէքթէպի նէվապ) կրօնական դատաւորներու դպրոց, (զրաաթ) երկրագործական, (մէքթէպի միլքիէի դըպպիէ) քաղ . բժշկ . վարժարան, (մէքթէպի հէնտէսէի միլքիէ) քաղ . երկրչփ . վարժարան, (տար իւլ մուալիմէյն) վարժապետանոց, (սէնայի նէֆիսէ) արուեստագիտական վարժարան :

19 . — Իսլամ կրօնական դպրոցի (մէտրէսէլէրտէ պուլունան թալէպէի իւլումտան) և ոչ իսլամ կղերանոցի մէջ պատրաստուած աշակերտներ (սըֆաթ բուհանիէի իհրազ իտէճէք մէքեաթիպի դայր միւսլիմէ թէլէպէլէրի) առայժմ զինուոր չեն առնուիր ցնոր տնօրինութիւն :



20. — Պետական մէքթէպի ֆիւնիւն (գիտութեանց դպրոցի), հարպիէ (սպայական), պահրիէ (ծովային), միւհէնաթիսանէի պէլէտիէ (ցամաքային երկրաչափական) և թէ գինուորական ուրիշ վարժարաններու աշակերտողներ զերծ են գինուորական ծառայութենէ :

21. — Ընդհանուր առմամբ սպաներու ամուրի զաւակները գինուորական ծառայութեանց պարտաւոր են :

Իսկ ամուսնացեալներուն եթէ աներ և աներձագ կայ, առաջին բաժնին կը փոխադրուի (գլխաւոր էվէլէ նազլ օլունուր) . իրենց հայր եթէ բանակի մէջ ծառայութեան մէջ է, նեցուկ չկրնար համարուիլ :

22. — Թէ՛ ըլլայ գինուորական և թէ՛ ըլլայ քաղաքական պաշտօններէ հանգստեան կոչուածներու (թէգայիւտ օլանլար) զաւակներն ալ գինուոր կ'առնուին :

Բացառութիւն ըլլալով՝ երբ հայրերնին հիւանդ է (մաալիւլ իսէ) և բժշկական քննութեամբ հաստատուած է . այլևս անոնց զաւակը իրենց նեցուկ համարուելով գինուոր չառնուիր :

23. — Իմամներ, քարոզիչներ (խաթրպա) շէյխեր, ինչպէս նաև ներկայ ընդունուած օրինօք ամբողջ կղերականներ զերծ են գինուորական ծառայութիւններէ :

24. — Կ. Պոլսոյ և իր արուարձաններու ժողովուրդներէն անոնք, որոնք օտարահպատակութեան խնդիր կը յարուցանեն, անոնք ալ ենթակայ են քննութեան, միայն թէ գինուորագրող պաշ-



տօնէից կողմէ պաշտօնագրով մը պէտք է հաղորդել զայն ներքին և արտաքին նախարարութեանց ու անոնց հրահանգին սպասել . սակայն միւս կողմէ զինուորական գործողութիւնը կրնայ շարունակուիլ :

25 .— Գաւառացիներ որոնց ծնունդը գաւառի մէջ ըլլալով՝ իրենք Պոլիս եկած և արուարձանները բնակած են , անոնց մասին զինուորագրող պաշտօնէութիւն կը հարցունէ նոյն գաւառի զինուորական վարչութեանէն ու անկէ առնուելիք պատասխանին համեմատ հարկ եղած տնօրինութիւնը կ'ընէ :

26 .— Ինչպէս նաեւ այն գաւառացիներ՝ որոնք Պոլիս գալով տմուսնացած և զաւակներու տէր եղած են , ասկէ ետք այլ ևս խտրութիւն չըլլալով անոնցմէ ալ զինուոր պէտք է առնել :

27 .— Զինուորական գործողութեան մէջ եթէ ծածկուած զինուորացուներ երեւան գան (նիւֆիւս մէքթումէ) և եթէ ասոնց տարիքները վեց դասակարգութեան բաժնուած (խնան սիթթէ) տարիքին մէջ է տակաւին , անոնց մասին ալ միեւնոյն զինուորական գործողութիւնը կը կատարուի . իսկ եթէ լրացուցած են այդ տարիքը՝ այլ ևս իրենց տարեկիցներու համեմատ գործողութիւն կը կատարուի :

28 .— Կ . Պոլիս , Բերա և Իւսկիւտար իրենց արուարձաններով , մէկ մէկ վիճակ (գասասպա) համարուելով , ո՛ր և է մէկու մը համար որոնելիք նեցուկը պէտք է որ իր սահմանին մէջէն ըլլայ . ուրիշ սահմանի մէջ բնակող մը միւս սահմանի մէջ բնակողի մը նեցուկ չկրնար համարուիլ :

29 .— Մէն մի շրջանակի զինուորագրող պաշ-



տօնեաներ պատասխանատու կը համարուին մի միայն իրենց սահմանին մէջ տեղի ունեցած գործողութեանց և միւս սահմանին պատասխանատու չեն :

30 .— Ս.մէն մէկ շրջանակի զինուորագրող պաշտօնեան Ս. զօրաբանակէն իրեն տրուելիք տեսրակին համեմատ գործողութիւն ընելու պարտաւոր է :

31 .— Իւրաքանչիւր թաղի խմամ, միսթար և կրօնաւորներ պարտաւոր են նոյն թաղի զինուորացուները հետերնին առնելով քննիչ պաշտօնէից ներկայացնելու և զինուորացուներն ալ իրենց անձնագիրը (նիւֆիւս թէզքէրէսի) ներկայացնելու պարտաւոր են :

Իսկ անոնց անուներ զորս նոյն տեսրակի մէջ արձանագրուած չեն, անձնագրին (նիւֆիւս թէզքէրէսի) համեմատ կ'արձանագրուին և այս կերպով ոչ ոք արձանագրութենէն դուրս պէտք չէ որ մնայ :

32 .— Մէն մի շրջանակի պատկանած ոստիկան և ոստիկան զինուորներ պարտաւոր են զինուորագրող պաշտօնէից օժանդակելու :

33 .— Քննութեան միջոցին մէն մի պաշտօնեայն իր վիճակի մէջ բնակող դպրոցականներու արձանագրութենէն տեսրակ մը բռնելու պարտաւոր է :

34 .— Սոյն հրահանգներէն դուրս ո և է պարագայ մը պատահած պարագային, քննիչ պաշտօնեաներ (մուայէնէ մէմուրլարը) պէտք է որ դիմեն ուղղակի էր.քեանը Հարպիյէ միրալայը Իսմայիլ Հագգը պէյին :



ՀԱՄԱՌՈՏ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԻՍԼԱՄ ՁԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ  
ՄԱՍԻՆ, ՈՐՈՒՆ ԵՆԹԱԿԱՅ ԵՆ ՆԱԵԻ ՈՉ-ԻՍԼԱՄՆԵՐԸ

Ձինուորական ծառայութեան շրջանը քսան տարի է, ասոնցմէ երեք տարին կանոնաւոր զինուորականութեան (ասաքիրի նիզամիէ), երեք տարին ինթիլեաթի ու անկէ ետք ութ տարին ալ ընտիֆի և մնացեալ վեց տարին ալ միւսթանֆըզի կը վերաբերին: Ամէն երիտասարդ 20 տարիք թեւակոխելուն առաջին օրէն սկսեալ զինուոր կը համարուի:

Ձինուորականութիւնն երկու կարգի կը բաժնուի, Ա. թէրթիպը էվէլ, որուն գաֆլի ալ կ'ըսուի Բ. թէրթիպը սանի:

Թէրթիպը էվէլ անոնք են, որոնք հիւանդոս չեն ու նեցուկ (մուին) ունին, վերջապէս արգելիչ պատճառ մը չունին զինուորութեան. իսկ թէրթիպը սանին անոնք են, որոնք թէպէտեւ զինուոր են բայց վերոյիշեալ արգելքներուն պատճառաւ զէնքի տակ չեն կոչուիր, ցորչափ այդ պատճառներ շարունակուին տակաւին. իսկ այդ պատճառներ վերցուած պարագային դարձեալ զէնքի տակ կը կոչուին: Երկրորդ թէրթիպը սանի են նաև անոնք, որոնց վիճակը (գուրա) թէպէտեւ ելած է, բայց կառավարութիւնը պէտք չէ տեսեր զէնքի տակ կոչել առ այժմ, այսինքն ենթադրենք որ կառավարութիւնը որոշած է այս տարուան զինուորացուներէն հարիւրին 75ը առնել միայն, ու 25ն ալ յաջորդին ձգել, այն պարագային 100 հատ թուադրեալ վիճակաթուղթ կը ձգուի տոպրակի մը մէջ և զինուորներու անունները մէկիկ մէկիկ կարդացուելով

6519




առաջադրուելէն թիւ մը կը քաշուի, որուն թիւը որ 75էն վար ելլէ անիկայ զինուոր կ'առնուի, իսկ որին որ 75էն վեր ելլէ, անիկայ թէրթիպը սանի կը համարուի (զինուոր չառնուիր):

Թէրթիպը սանիներն ալ 6—9 ամիս զէնքի տակ կը կոչուին մարզանքի համար: Ինչպէս նաեւ կառավարութիւնը պէտք տեսած սանն՝ մարզանքի համար զէնքի տակ կը կոչէ զանոնք իրենց բնակած գաւառին մէջ:

ՓԱՌՍՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԶԱՆՈՆՔ ՓԱՌՅՆՈՂՆԵՐՈՒ ՊԱՏԻԺ

Զինուորացու երիտասարդ մը երբ 20 տարիքին մէջ թեւակոխած է ու տակաւին թուահամարի ենթարկուած չլլայ ալ նոյն իսկ, ինչպէս նաեւ վիճակն ելած զինուոր մը եթէ օտար երկիր փախչի և կամ պահուրտի և կամ նենգութիւն ընելով ուրիշ հիւանդ մը ներկայացնեն իրենց տեղ և կամ անուանին փոխուն, անոնց էֆրատը մէղճուրէ (պատժեալ զինուորներ) անաւնը կը տրուի ու պատժոյ կ'ենթարկուին, սա եղանակաւ որ խնդիրը երեւան ելած միջոցին, անոնք այլ եւս կը զրկուին իրենց արդարանալի այն փաստերէն որոնցմով սր պիտի կրընային փրկուիլ անկէ առաջ, մինչեւ իսկ եթէ խեղանդամ ու հիւանդոտ ալ ըլլան, բանակը՝ անիկայ յարմար գործի մը կը ծառայեցնէ զինուորութեան մէջ: Երկրորդ՝ ինթիւնաթութեան չըջանն որ երեք տարի է, այն ալ միասին պիտի կատարէ որով վեց տարի զինուորութիւն պիտի կատարէ անդադար: Ու այս քսան տարին կը սկսի զէնքի տակ մտած






Թուակամէն սկսեալ առանց նկատի առնելու իրեն  
տարիքին մեծութիւնը :

Ինչպէս նաեւ անոնց փախուստին և նկնդու-  
թեանց սատարողներ , երեք ամիսէն աւելի չըլլալու  
պայմանաւ , կը բանտարկուին և մէկ օամ . ոսկի " 1  
տուգանքի կ'ենթարկուին :

Զինուորութենէ խուսափելու նպատակաւ , որք  
և կամ անոր աղջիկներ առնելով ամուսնացած ե-  
րիտասարդներու մասին եղած օրինական արամա-  
դրութիւնը Քրիստոնէից օրինաց թողորովին հակա-  
ռակ ըլլալուն պատճառաւ զանց կ'առնեմ խօսիլ  
այդ մասին :










# ՀԵՂԻՆԱԿԻՆ ՄԻՒՍ ԳՈՐԾԵՐԸ



	Պ.ԲԶ.
Հաւաքածոյ Օրինաց Ա. Մաս (Ուղեցոյց վաճառականի)	5
Բ. մաս	5
Վաճառականի մը ընթացքը	3

Հեղինակին կնիքը սրտոգներ անվաւեր են

Գ/ն 40 փարա

Մեծաքանակ ուղողներ պէտք է դիմեն հեղինակին  
գրասենեակը՝ Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Գաթըրճը  
Օղլու Սան Թիւ 90 :











14705 14709

2013



